ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ԾՐԱԳԻՐ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ

ԾԱՂԿԱՁՈՐ - 2018թ.

# Նախաբան

Սույն ծրագիրը կազմված է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի և «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները ՀՀ բնապահպանության նախարարության հետ համաձայնեցնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման / N 1544-Ն 26.09.2002թ./ պահանջներին համապատասխան: Ծրագրի առաջնությունները սահմանել ենք. հաշվի առնելով՝

- Գազպրոմ Արմենիա ՓԲԸ << Հրազդան -5>> հիմնարկ, «Հրազդան ՋԷԿ» և <<Հրազդան ցեմենտ>> ՓԲԸ- ների գործունեության հետևանքով Ծաղկաձոր քաղաքի շրջակա միջավայրի վրա առկա ազդեցության գործոնները,
- կառավարության N 948-Ն 09.07. 2005թ. որոշմամբ «Ծաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջիկության կենտրոն դարձնելու» նպատակային ծրագիրը, որում կանխորոշվում են նաև մի շարք բնապահպանական խնդիրների առաջնային լուծումները,
- քաղաքի սեզոնային /ամառային, ձմեռային/ գերբեռնվածությունը՝ պայմանավորված հազարավոր այցելուներով և զբոսաշրջիկներով:

## Ծրագրի նպատակները, խնդիրները և գործողությունները

Նպատակ- 1 Քաղաքային զբոսայգու կանաչապատման կազմակերպում, մացառուտների մշակում, կոճղաշիվերի վերաճի օժանդակման աշխատանքների կազմակերպում:

## Ծրագրի ակնկալվող արդյունքները

Քաղաքում կանաչ գոտիների ավելացմամբ և բարեկարգմամբ կկարգավորվեն մի շարք բնապահպանական և գեղագիտական խնդիրներ:
Կստեղծվի բարեկեցիկ միջավայր, որը առավելապես կգրավի զբոսաշրջիկներին՝ քաղաքը դարձնելով Հանրապետությունը ներկայացնող արժանի կենտրոն:

Ծաղկաձորի համայնքապետ Ա.Հարությունյան

## Ծրագրում նախատեսված միջոցառումների հաշվարկները

| Ծրագրային միջոցառումների անվանումը | Չափի միավորը | Միավորի քանակը | Միավորի Արժեքը / դրամ/ | Ընդհանուր Գումարը /դրամ/ | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 Ծառատունկի կազմակերպում<br><br>1.1 1-1.5մ բարձրությամբ հողագնդով սոճենու տնկիների արժեքը տեղափոխումով: | հատ | 100 | 5000 | 500000 | 20 ապրիլ – ից<br>մինչև<br>20 մայիս |
| 1.2 փոսերի փորում 0,5x 0.4մ չափսերով | հատ | 100 | 900 | 90000 | |
| 1.3 ծառերի տնկում հողագնդով, փոսերից դուրս եկած քարերի հեռացում, ըստ անհրաժեշտության սևահողի ավելացումներ, բնաբաժակների պատրաստում ոռոգում,: | հատ | 100 | 1600 | 150000 | |
| 2 Թփերի տնկում<br><br>2.1 0.4- 0.5 մ բարձրությամբ կիպրոս սովորականի /բիրյուչինա/ առժեքը տեղափոխումով: | հատ | 1000 | 180 | 180000 | |
| 2.2 խրամուղու փորում 0.25x0.30մ չափսերով, դուրս եկած քարերի հեռացում: | գծ | 150 | 300 | 45000 | |
| 2.3 թփերի տնկում, ըստ անհրաժեշտության սևևհողի ավելացումով, ոռոգում | հատ | 1000 | 47 | 47000 | |
| Ընդամենը | | | | 1022000 | |

Ծաղկածորի համայնքապետ Ա.Հարությունյան

**Համաձայնեցված է**

ՀՀ բնապահպանության նախարար

________________ Ա. Մինասյան

«31» հունվարի 2018թ.

**Փոփոխություն N 1**

Ծաղկաձոր համայնքի 2018թ.
բնապահպանական ծրագրի հավելվածի

## Ծաղկաձոր համայնքի 2018 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

**Ծաղկաձոր համայնքի 2018 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները**

| N | Միջոցառման անվանումը | Գումարը /հազ. դրամ/ | Համամասնությունը % |
|---|---|---|---|
| 1 | ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 1022.0 | 100.0 |
| 1.1 | Ծաղկաձորի համայնքային զբոսայգու կանաչապատման կազմակերպում | 1022.0 | 100.0 |
| 2 | ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | 0.0 | 0.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 1022.0 | 100.0 |